

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքը արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3594

1924

281.6

U-70

Ա.Բ.

ՎԵՀԱՓՈՒ ՀԱՅՐԱՊԵՏԵ  
ԱՄԵՐԻԿԱ ՀՈՅՈՅ

1924



Խ ՏԱՐԱՆ Ա. ՅՈՒՆԻՔ  
ԵՐԵՎԱՆ

1200  
050

281-6  
Ա-70

2010

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՍՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ  
Տ. Տ. ԳԷՈՐԳՈՅ Ս. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ  
ԵՒ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ  
ԱՐԱՐԱՏԵԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ  
Մ. Է. ԶՄԻՍՏՈՆԻ

ՈՐԴԻԱԿԱՆ ԱԿՆԱՏՈՒԹԵԱՄԲ



ՎԵՀԱՓԱՌ ՏՀԻ

Ուրախ եմք յոյժ զի ի սկզբանէ նորոյ տարւոյ և այսը,  
ըստ կանոնաւորելոյ ընթացից սուրբհանդակաց, հանդիպեցաց  
բախտի եւ պատուոյ ընդունելոյ զեօթաննեսին Պատռեական  
կոնդակս զառ ի Վեհէդ շնորհեալս յաղագս իրաց ինչ կարեւու-  
րացնկրտելոց ի բարեկարգութիւն Եկեղեցւոյս Հայաստանիայց:  
Կէսք ի նոցանէ առքերէին մեզ զբարւոք լուծումն  
խնդրոց ինչ որոց տեղեակ էաք եւ համաձայն յառաջազոյն  
մինչչեւ բազմեալ մեր յԱլոռ Պատրիարքութեան Սրբոց Յա-  
կորեանց Երուսաղէմի, իսկ կիսոցն որք զնոր խնդիրս յուզեն  
փութամք պատասխանի առնել, համարձակեալ ի հայրական  
առաջադրութենէ եւ յերկայնմտութենէ վեհիդ և ազաւինեալ  
ի շնորհս Հոգւոյն ճշմարտի՝ որում միայնոյ իշխանութիւն է  
առաջնորդել մեզ ամեննեցուն ի ճանապարհ ուղղութեան եւ  
ի շատիւս արդարութեան:

Արդ, ի կարգի վերջնոց Հայրապետականդ կոնդակաց՝  
ի ձեռն այնորիկ որ ընդ 102 Համարակ՝ հաճոյ թուեցեալ էր  
վեհիդ հարցանել զկարծիս մեր՝ եթէ զի՞նչ արժան է խորհել  
ի մասին կուսակրօն Հոգեւորականաց ոմանց՝ որ խնդրեն  
թողուլ զվեղար կամ զկոչումն Վարդապետութեան, ապա  
ամուսնանալ և քահանայագործել, եթէ թոյլ տացի:

Մեր ի քնին առեալ և կշռեալ զամենայն հանգամանս  
նորանշան խնդրանացդ՝ անպատճէ ամենեւին վարկանիմք ընդ  
այդպիսի ինչ հաւանել, զի մի ըստ իւրաքանչիւր ցանկու-

թեանց տացուք ընթանալ յուպէտ յուկամ այսօր ոմանց եւ վաղիւ բազմաց , եւ աղարտեսցի պատիւ լրութեան մարմնոյ Եկեղեցւոյ Հայաստանեաց : Քանզի ո՞ւր յայնժամ գտանիցին կանոնացն որոշ կարգք , յորոց բառնալն՝ բարձին և ամենայն ուղղութիւնը ի միջոյ , կամ ո՞ւր իցէ այնուհետեւ հանդիպել ողջամիտ ընտրութեան կամաց՝ եթէ չկալցի ոք կատարեալ զպաշտօն՝ իւր , եւ չունիցի յայտ առնել զանձնէ՝ թէ «Եսովիրեալ» իցէ , եւ վաղվաղեսցէ ի դրժումն ուխտին :

Մատիցուք սակայն փոքր ինչ յառաջ ի խորութիւն խնդրոյն առանց իրից դեգեւելոյ , և փոյթ յանձին կալցուք դարման տանել մարդկեղէն տկարութեանս ի վեր երեւելոյ մանաւանդ ի վերջին ժամանակս , զի մի՛ յողդողդ յօժարութիւնց կրից ապաստան գտանիցին ի պէսպէս անկարգութիւնս :

Այս ինչ է զոր ունիմցս ասել , վեհափառ Տէր . կամ խսպառ պարտ է բառնալ ի միջոյ զուխտ կուսակրօն քահանայութեան , և կարգի նոուիրապետութեան յեկեղեցւոջ նորոգ իմն ճանապարհաւ դնել կանոն եւ սահման , եւ կամ՝ զայն . պիսխս , որոց յետ միանգամ ուխտելոյ և յանձն առնլոյ զլուծ կուսակրօնութեան անհնար լիցի ժոյժ ունել , արձակել ի պաշտամանէ սրբութեանն՝ ըստ կանուխ սովորութեան նախնեաց՝ եւ հանել զնոսա յազատութիւն աշխարհի : Արդ , եթէ զոյ ինչ ճշմարտութիւն , չեւ ևս համարիմք հասեալ զժամանակ քակելոյ առաջնոյ ցանկոյն , և չէ իմաստութեան՝ մտարելու իսկ յայն ի պատճառս անխայութեան մարմնոյ : Զի բաց զիրամատն թողեալ իւրացանչիւր ախորժակաց՝ վայրապար այնուհետեւ ակն ունիցիմք խափանման որոգայթից «Սատանայի որ զինուորեալն է միշտ ընդդէմ ոգւոց մարդկան» :

Եթէ Եկեղեցի Հայաստանեայց յաւելորդաց սակի գիցէ զուխտ յանձնառութեան կուսակրօն պաշտօնէցին իւրաց եւ կամ իրեւ ի թեթեւ ինչ հայիցի յայն ունչեւ ջրել զեմլու օր մի յաւուրց որպէս եւ դէպք տայցեն , իցի ՀԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՅՏ

կտորյ խաղ , եւ զհետ գայցեն անհարթութիւնը , եւ ոչ ինչ ի շինած Եկեղեցւոյ լինիցի :

Բայց է՛ ինչ կարեւոր յոյժ՝ յոր արժան է մեզ ուշ ունել լրջմտութեամբ : Գիտեմք զի Եկեղեցի Հայաստանեայց յառաջնմէ օրէ անտի հաստատութեան իւրոյ մինչեւ ցայսօր՝ կանոն զայս ընկալեալ է : «Ոչ ա՛յլ զոմն եկեղեցի և ա՛յլ զոմն վանս համարել տխմար բանիւք» , ըստ մեծին Սահակայ :

Եւ արդ՝ ոչ ապացէն ի կազմութեան Ուլիստի մանկանց Եկեղեցւոյս եւ ի պահպանութեան կրօնական կարգաց եւ օրինաց՝ զառաջինն և զվերին ունի միշտ զտեղի Մայրավանքն Սրբոյ Աթոռոյդ Լջմիածնի , և զերկըրդն , առանց ինչ ընդ բանս ածելոյ , վանքն Սրբոց Յակոբեանց : Զի՞արդ սակայն հնարաւոր լիցի ունել զառաջս հակակուսակրօն ազդեցութեանն ծաւալելոյ ընդ բնաւ և ընդմտելոյ մինչեւ ի ծուծս ոսկերաց մեծի եւ փոքրու քան զամենայն սուր երկսայրի , մինչեւ ցորոշումն յօդից եւ ուղղոյ՝ հօտին եւ հովուի :

Արդ , եթէ ներեսցի ինձ , վեհափառ Տէր , ոչ դանդաղեցայց առաջի առնել սակաւուք զոր եսս խորհիմ և ընդ իս զնոյն՝ ոմանք ի պատուական եւ յերիցազոյն միաբանակից եղբարց մերոց՝ զորոց ոչ ուստեց զպարկեցտ վարուքն բիծ ինչ կամ արատ շինալ է : Մեր յառաջ քան զամենայն հոդ խնամոյ է՛ եւ եղիցի' , որպէս եւ կամք են վեհիդ , պահել ի կայի եւ յակաստանի զլուացելականն Աթոռ Հայոցս Երուսաղէմի , զգոյշ եւ պատկառ կալով ցվախճան ժամանակաց՝ առ ի պաշտամանութիւն մեծաշուր իրաւանցն մերոց ի Ս. Տեղիս աստ , շնորհիւ որոց մեծարեալ պատուի Եկեղեցի Հայաստանեայց յաչս հեռաւոր և մերձաւոր ազանց ի բազմապատիկ դարուց հետէ , եւ վասն յաջողելոյ յայդմիկ , հարկ ի վերայ կայ մեզ նուիրիլ ի հանդերձանս պատրաստութեան վահականաց առ ի լուու զանհրաժեշտ պէտս սպասաւորութեան Աթոռոյս եւ նապաստ լինել միանգամայն ժողովրդեան

մերում բնակելոյ ի մեր կողմանս առհասարակ : Ի ժամանակի աստ, զոր յետին արժան է կոչել ըստ ամենայն մտաց, եւ ընդ որ պարտ է մեզ արտմել եւ հոգալ թախծութեամբ սրտի, կորեաւ ամենայն, և հարթ եղեն գետնոյ ամենայն չաստա տութիւնը մեր և շինուածք ի բազում տեղիս, եւ միայն ողործութեամբն Աստուծոյ՝ երկու եւ եթ մնացին Մայրավանք ի միիթարութիւն Եկեղեցւոյ Հայաստանեաց, և ի ծոցոյ երկոցունցս ակն ունիցիմք ծնանելոյ ճշմարիտ հովուացն գնդի զինու Հոգուոյն վառելոյ :

Առաջի աչաց ունելով ուրեմն ի միոյ կողմանէ զրուան յարձակմունս ընդդիմամարտից կուսակրօնութեան և ի միւսմէ զտարապարտ դասալքութիւն Հոգեւորականացն մերոց, նա աւանիկ միտ եղեալ հաւանական նաւակնութեանց ի փոթորկեալ ծովու անպատսպար տատանմանցս, պարտ անձին համարիմք հնարիլ փախչել յերեսաց դժպատեհ զայթակդութեանց, եւ այն ոչ վարկպարազի իմն բարեքմամբ ախտից զի մի՛ ի վտանգ արկանիցեմք զողջանդամ լըութիւն Վանական Միաբանութեանս, որոյ եթէ նուազեցի սահմանեալն թիւ, դժուաբասցի ինքնին ճշդիւ պահպանութիւն դարաւոր եւ սուրբ Խրաւանցս յոր ակնարկեցաք :

Վասն որոյ ստիպիմք խելս խառնել սակս նորոգ ինչ մուծանելոյ կանոն ի Ձեռնադրութեան, զի հնար լիցի ելի աղազս գտանել առ ի յապահովի կացուցանելոյ զայնչափ անչափ արդինս վաստակոց եւ զգայելուչ վիճակ վանացս Մբրոց Յակոբեանց :

Այսպիսի ինչ է յոր յածին միտք մեր, ո՛վ Պատուական Հայրապետ : — Զժառանգաւոր ուսանողս մեր՝ յայլ եւ այլ աեղեաց ընտրեալս՝ ի պատշաճ ժամանակի հրաւիրել յեկեղեցական կոչումն — ի Սարկաւագութիւն եւ յետ երից ամաց ի Քահանայութիւն — առանց սակայն պահանջելոյ ի նոցանէ զուխտ կուսակրօնութեան, այլ պայման եղեալ նոցին՝ յետ

քահանայական ձեռնադրութեան մնալ ի վանս զհինգ կամ զեօթն ամս եւ ի ծառայութեան կալ յայս կամ յայն զործ պաշտաման յո՛ր եւ կարգեսցին :

Չեռնադրեալքն ըստ այսմ պայմանի՝ կրեսցեն Վէղար յեկեղեցւոշ և արտաքոյ, ոչ եթէ ի նշան կուսակրօնութեան այլ իբրեւ զբաջայտ տարալ անամուսին Եկեղեցականացս Հայոց արկցեն զայն զգլիով, և ի Լուլ ժամանակի պաշտաման իւրեանց ի սպասաւորութիւն յիրս Աթուոյս, վերստին հրաւիրեսցին հրամանաւ Պատրիարքի կամ հաճութեամբ Տնօրէն Ժողովոյ Միաբանութեանս որոշել վճիռ բանիւ եթէ ունիցին զյօֆարութիւն մտանելոյ ընդ լծով կուսակրօն վանականութեան թէ ոչ, այս է ընտրեսցն կալ մնալ ի ծառայութեան վանացս՝ եթէ ելանել անտի եւ յերիցութեան կարգի քահանացործել այլուր:

Որբ ողջամիտ խորհրդով եւ խոճի մտօք յանձն առնուցուն ընթանալ ընդ նեղ ճանապարհն — զի յայնժամ, որպէս թուի մեզ, կարճեսցին պատճառք մատաղատունկս ի տիս եւ անփորձս զնոսա համարելոյ — եւ ի կասարել զուխտ իւրեանց՝ ընկալցին զվեղար առանձինն օրհնութեամբ ըստ կանոնի Չեռնադրութեան, եւ առցեն զմասնաւոր իշխանութիւն վարդապետական Գաւազանի : Հանդարտութեամբ ոգւոյ եւ պարկեցտ բարուք պարապեսցին ի գործ եւ յուսմունս, հանապազրդեսցեն ի քարոզութիւն Բանին կենաց, և միով շնչով նահատակիցին ի հաւատս Աւետարանին : Բատ սմին օրինակի այրընտիք եղելոցս յիւխտի Միաբանութեանս ելցեն իրաւունք կարեւոր ընտրութեանց եւ պաշտօնական հանգամանաց, եւ ըստ արժանուոյն աւագութեանց պատուոյ Մայրագոյն Վարդապետութեան, և աստիճանի եպիսկոպոսութեան ի ձեռնադրութենէ Հայրապետին Ամենայն Հայոց, և կացցեն երաշխաւորք եւ նախանձայոյզք՝ զամենայն աւուրս կենաց իւրեանց՝ բոլորից կարգաց եւ կանոնաց Միաբանութեանս և

իրաւանցն մերոց որ ի վերայ Ա. Տեղեաց , զի մտադիւր նուիրելոցն փոյթ լիցի այնուհետեւ եթէ ո՞րպէս հաճոյ եղիցին Տեառն ըստ Առաքելոյն : Իսկ որք կամիցինն հեռանալ ի վանացս պահելով զկարգ աշխարհական երիցութեան , թողցեն զկեղար եւ փակեղամբ երթիցեն ուր պարտն իցէ : Եւ յայնմ օրէ անտի ո՞չ եւս ի թիւ Միաբանից մերոց համարեսցին : Սակայն եւ այնպէս բարուք վարկանիմք զի յառաջնում դիպող ժամու մտցեն ընդ լծով օրինաւոր ամուսնութեան , և մի այսր եւ անդր հարեալ զմիտու վարանեսցին ուղղել զգնացս իւրեանց , եւ տիրեսցեն նոցա սեղք :

Զայս եւս յաւելումք աստէն՝ զի եթէ որ ի բնիկ ուխտադիր վանականացս ի դժապատեհ իրաց փորձեալ՝ չկարասցէ անարատ պահել զանձն յաշխարհէ , ելցէ արտաքս ի վանացս և ի Միաբանութենէ ո որ և իցէ . լուծցի ի կարգէն եւ ընդ ժողովրդականս դասեսցի :

Արդ՝ եթէ առանց իրիք ընդհատութեան՝ ամ ըստ ամէ ի Թալրոցի վանացս յաջողեսցի մեզ կրթել յաստուածապաշտութիւն զդասս ժառանգաւոր Անուց Աթոռոյս , զամենայն պատահականութիւնս կշռեալ համանգամայն՝ հաւանական համարիմք յոյժ զի ոչ պակասեսցի ի մէնջ թիւ և փոյթ զործակցութեան միաբանից և ոչ դոյզն լինիցի երաշխաւորութիւն պահելոյ զլրութիւն սպասաւորաց Աթոռոյս , որով եւ մարթիցի մեզ արդեօք ընդ այլ սեպհական օգուտս վանացս զուգել և զհնալս տարածանելոյ զկրօնական և զհայրենի ուսմունա ի մէջ ժողովրդեան մերոյ ի ձեռն աշխարհիկ երիցանցն այնոցիկ որք կամաւ և յօժարութեամբ վերակացուք և օրինակ լինիցին քրիստոսական հօտին յանձն եղելոյ ի նոսա :

Վեհափառ Տէր ,

Զայս խորհուրդ մտաց մերոց համարձակեալ առաջի առնել Վեհիդ , ըդիւք ցանկամք յիրիս յայսմիկ հասու լինել բարձրագոյն յօժարութեան կամաց Պատուական Հայրապետիդ

Ամենայն Հայոց և հաճութեան Գերագոյն Հոգեւոր Խորհրդոյդ միանգամայն , զի վատահ լիցուք եթէ չեմք ինչ օտարացեալք յիմաստութենէ և ի ստոյգ փորձոյ քննութեան իրացն՝ զորմէ բանքս են : Ի հաշտ ակնարկութենէ վեհիդ յայսպիսի նորոգ կանոն Զեռնադրութեան քաջալերեալք ձեռն արկցուք ի զէպ ժամանակի յարդիւնս ածել զարժանն , յառաջ իսկ , թէ հնար ինչ իցէ , քան զՀամագումարն Ազգային — Եկեղեցական Ժողովոյ , որոյ զուցէ յապահեսցի գումարումն , ո՞ զիտէ ցորեան ժամանակս , մինչ տակաւին , ցաւէ մեղ ասել , զի եւ վասն չորից կամ հնգից եպիսկոպուսացու Միաբանից մերոց՝ ի հերուն հետէ ցայսօր՝ ոչ եհաս հրաման յուղի անկանելոյ ի Մայր Աթոռ Սրբոյ Եջմիածնի և արժանի լինելոյ ածոթեանն շնորհաց ի Զեռնադրութենէ Պատուական Հայրապետիդ Ամենայն Հայոց :


Վեհափառութիւն Զեր այլով կոնդակաւ որ ընդ 106 Համարաւ՝ հաճեալ էր առաջի առնել մեզ եթէ զինչ արդեօք ունիցիմք ասել զընդարձակմանէ աւուրց Պսակի ի պատճառս անակնկալ իրաց յայլ եւ այլ կողմանս աշխարհի ի յայտ եկելոց : Զից երկբայել զի մեր պարտիք են բարոյականք դիւր առնել տառապելոյ ժողովրդեան մերում ի դժուարինսն , և ո՞չ երբէք զակն արկանել յընտանեկան պիտոյից և կարեաց նորա , մանաւանդ եթէ նժդինութեամբ սահեալ յերկիր օտար ի հարկէ իրացն հարկանիցին ընդդէմ օտարոտի սովորութեանց և պահանջից , եւ չէ մարթ ումեք զանց առնել զնոքօք առանց յանձն ճգելոյ զվիշտ վտանգի և զայլ ճախողուածս : Ուստի եւ մեք հաճ եմք և հաւան ընդ խոհական առաջարկութիւն Հոգեւոր եղբարցն մերոց՝ եպիսկոպուսական դասու Մայր Աթոռոյդ՝ գնելոյ զպսակ ամուսնութեան յորեւ իցէ ժամանակի , խորելով՝ որպէս վայել իսկ է զաւուրս Աւագ Եօթնեկի ի յիշատակ Զարչարանաց և մնձի Խորհրդոյ Տեառն , և թուի ինձ զի թերեւա չիցէ պիտոյ զայլ երկուս շաբաթս՝ զԾննդեանն

առեմ եւ զՄեծի Պահոցն՝ ընդ մի համար ունել ընդ Աւագ  
Շաբաթուն։ Շատ է զի օրէն լիցի երիցանց Եկեղեցոյ պա-  
տուէր տալ բարեպաշտօն ամուսնացելոց զի մի մոռասցին զժա-  
մանակ զրկելոյ զմիմեանս յաւուրս սրբութեան, ուխտիցն կամ  
աղօթից պարապելով, ըստ Առաքելոյն։

\* \*

Վեհափառ Տէր,

Բանս երկուս թոյլ տացի ինձ ասել և վտան Հայ-  
րապետականդ կոնդակի՝ որ ընդ 349 Համարաւ անցելոյ  
ամին։ Նովիմբ հասանէր առ մեզ Բարձրագրյն Հրաման Վեհիդ՝  
ի բաց զին Տոմարն թողլոյ և զնորոյն բուռն հարկանելոյ  
անդստին յամէ — 1924 — որ առաջի մեր կայ։ Զայդմ փո-  
փոխմանէ ոչ ուղղակի ընկալեալ յառաջազոյն գիր հարցման  
կամ հրամանի առ ի Վեհիդ՝ չեղեւ մեզ պարապ յայտ առնելոյ  
զկարծիս մեր, և պատմնլոյ զառանձինն տօնական հանգամանս  
Արբոյ Քաղաքիս, ուր երից ազգացն քրիստոնէից — Յունաց,  
Լատինաց եւ Հայոց — սեպհական իրաւունք են և սահմանեալ  
աւուրք ժամերգութեան և տօնակատարութեանց ըստ անձնիւր  
տոմարական ցուցման՝ մանաւանդ ի Ս. Յարութիւն եւ ի  
Բեթղիէմ։ Եւ ցարդ մեր եւ Յունաց տօնական աւուրք՝ որ-  
պէս և Լատինացն՝ ի տեւական կարգի — Statuquo — գտանին,  
և չէ մեզ հնար փոփոխել զթիւ աւուրց ըստ նորոյ Տոմարի՝  
մինչեւ Որթողոցս Պատրիարքութեանն Երուսաղէմի հաճոյ  
թուեսցի ձեռն արկանել յընդունելութիւն վերջնոյս։ Վասն  
որոյ յաղերս անկեալ խնդրեմք ի Վեհիդ մի՛ լինել մեղադիր  
յիրիդ յայդմիկ առ ժամանակ մի։ Ակն ունիմք զի, վաղ կամ  
անագան բարձցին պատճառք արգելից յայդմ մասին, և դիւրեսցի  
մեզ ճանապարհ ընթանալոյ ըստ կամաց եւ կարգադրութեան  
Վեհիդ՝ որում եմք միշտ հնազանդ որդիւ և խոնարհ ծառայ։



3594

ԺՀ

ԱՀ



3419